ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 30 >> 10 2013թ. N: 300-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 266 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի <<ա>> կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի դրույթներով, հաշվի առնելով <<Վորլդ վիժն ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի Շիրակի մարզի զարգացման ծրագրի ղեկավարի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 374 գրությամբ արված առաջարկությունը.

Որոշում եմ

1. Աղետների ռիսկի նվազեցման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային թիմի կազմում ընդգրկել <<Վորլդ վիժն ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի Շիրակի մարզի տարածքային զարգացման ծրագրի ղեկավար Արտակ Օրդյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի <<Աղետների ռիսկի նվազեցման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային թիմ ձևավորելու մասին>> թիվ 266-Ա որոշման հավելվածը <<Գագիկ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գլխավոր անեսթեզիոլոգ, թիմի անդամ.>> բառերից հետո լրացնել <<Արտակ Օրդյան - <<Վորլդ վիժն ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի Շիրակի մարզի տարածքային զարգացման ծրագրի ղեկավար, թիմի անդամ.>> բառերով:

Իսկականի հետ ճիշտ է՝

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ